ՔՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԱՅԻՆ ԿԵՐՏՎԱԾՔԻ ԵՐԳԵՐԻ ՌԻԹՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ն. Հ. ՋԱՈՒԱՐԻ

Քրդական չափածո բանահյուսությունը, այդ թվում նաև պարային կերտվածքի երգերի բանաստեղծությունը և դրանց հետ սերտ առնչության մեջ գտնվող միջնադարյան բանաստեղծների ժողովրդական ոգով ու ոճով գրված ստեղծագործություններն ունեն որոշակի կատարման կերպ։ Այն արտահայտվում է հանդիսավորությամբ և տաղաչափության մետրերին համազոր ուրույն ռիթմով։ Ռիթմի էությունը ոտքերում ինչպես շեշտված և անշեշտ վանկերի, այնպես էլ հաճախ վանկերի տևողությունների որոշակի հաջորդականության պահպանումն է, որը քրդական միջավայրում տարբեր ռիթմաշարահյուսական համակարգերի առկայության արտահայտությունն է։ Այդ համակարգերը սերտ առնչության մեջ են գտնվել և գտնվում երաժշտության, երաժշտական ռիթմերի հետ, մանավանդ, որ արևելքի միջնադարյան, այդ թվում և քուրդ բանաստեղծները եղել են հիմնականում երգիչներ, կատարել են իրենց ստեղծագործությունները որոշակի մեղեդիով, ռիթմով։

Երգով և արտասանությամբ կատարվող միջնադարյան բանաստեղծների ստեղծագործությունների, չափածո բանահյուսության ու ժողովրդական երաժշտության ռիթմերի համեմատական ուսումնասիրման, տիպաբանության բացահայտման միջոցով հետագայում թերևս հնարավոր կլինի լայնորեն քննարկել բանաստեղծության և երաժշտության փոխադարձ կապը, փոխազդեցությունները[1] և այլն։

Կանգ առնենք պարային կերտվածքի երգերի երկակի՝ երկչափ և եռաչափ ռիթմական դրսևորման և դրանց հարաբերությունների բացահայտման վրա, որը կօժանդակի նաև երգերի բանաստեղծությունների տաղաչափության ճիշտ մեկնաբանմանն ու կատարմանը։

Քրդական պարային կերտվածքի երգերի բանաստեղծություններն ունեն տարբեր ծավալի և մետրերի ոտքեր, որոնք կատարվում են երկչափ (տևողության 4,8 միավոր ունեցող) և եռաչափ (3,6 միավոր) ռիթմով՝ հնամաձայն երաժշտական մետրառիթմերի։ Ընդ որում նույնատիպ տաղաչափական ոտքերը կարող են կատարվել՝ արտասանվել կամ երգվել տարբեր ռիթմերով։ Բնականաբար երգվող բանաստեղծության տողերը, ամբողջական կառուցվածքը, որոնք հիմնվում են ոտք կառուցվածքային միավորի պարբերական կրկնողության վրա, ունեն երկակի՝ երկչափ և եռաչափ (փրենց տարբերակներով) ռիթմիկ կատարում։ Ստացվում է նույն խոսքերով ու տաղաչափական կառուցվածքով երգի ռիթմական տարբերակում, որը կարող է զուգորդվել նաև մեղեդու ընթացքի, լադահնտոնացիոն հիմքի, կառուցվածքի տար-

---

1 Նման և հարակից հարցերի ուսումնասիրմանը օժանդակելու նպատակով ցանկալի է, որ յուրաքանչյուր բանահավաք չափածո նմուշները ձայնագրի կամ էլ խոսքերի գրառմանը զուգահեռ տա նմուշի պարբերաբար կրկնվող մետրական կամ կառուցվածքային միավորի վանկաչափային սխեման։ Մեր շարադրանքի մեջ վանկաչափի միավորը կնշվի V նշանով։ Յուրաքանչյուր բանահավաք կարող է ստեղծել վանկերի տևողությունների գրառման իր նշանները կամ օգտվել տևողությունները ֆիքսող ժամանակակից տեխնիկայի միջոցներից։ Այս առումով ուշագրավ է երգվող վանկի տևողության գրառման երաժշտագետների փորձը։ Գրառման եղանակը երաժշտագիտության մեջ հայտնի է վանկառիթմ տերմինով։

բերական հետ։ «Qазе» («Ղազե»[2]) երգի տարբերակներում[3] փոխվում է միայն ռիթմը։



Երգի տան առաջին տողն է. Qазе qаз, qаз/дилбәр щан, щан[4].



Բանաստեղծական տողի երկրորդ, երրորդ, վեցերորդ և յոթերորդ վանկերը առաջին տարբերակում կատարվում են ռիթմի մեկ միավորի, երկրորդում՝ երկու միավորի տևողությամբ։ Երկրորդ տարբերակի մեղեդու ջարդարանքում այդ երկար հնչող վանկերը ստեղծում են ուրույն շեշտադրություն։

Ունենք «Зер Зәйнәбе» («Ոսկե Զայնաբ») երգի ընդհանուր (ոչ էական տարբերություններով) բանաստեղծական տեքստով երեք տարբերակ[5]։

---

2 Ղազե—աղջկա անուն է։

3 Առաջին տարբերակը հրատարակվել է մեր «Քրդական ժողովրդական պարերգեր» ժողովածուում (Երևան, 1964, էջ 45), երկրորդը անտիպ է։

4 Ղազե ղազ-ղազ, սիրուն ջան-ջան։ Բանաստեղծության հաջորդ տողերը ունեն նման կառուցվածք։

5 Առաջինը հրատարակվել է մեր կազմած «Քրդական ժողովրդական պարերգերում» (էջ 38), երկրորդը՝ մեր «Քրդական ժողովրդական երգերում» (Երևան, 1983, էջ 33), երրորդը՝ Կ. Զաքարյանի «Քրդական ժողովրդական երգերում» (Երևան, 1936, էջ 107)։



Տարբերակից տարբերակ փոխվում է մեղեդին, լադաինտոնացիան, բանաստեղծության կառուցվածքի հետ՝ մեղեդու կառուցվածքը։ Ռիթմը, ինչպես նախորդ օրինակներում, երկչափից փոխվում է եռաչափի։ Եթե կազմելու լինենք նաև այս օրինակների ռիթմաշարահյուսական աղյուսակը, այն կնմանվի նախորդին, միայն այն տարբերությամբ, որ բանաստեղծության ռիթմը կունենա - – – |⌣ ⌣ պատկերը, իսկ եռաչափ երաժշտական ռիթմը՝ վանկառիթմի ու վանկաչափի համապատասխան սխեմա։

Նկատենք, որ վերը բերված տարբերակներում լեզվական շեշտադրությունը չի համընկնում երաժշտական շեշտադրության հետ և որ ռիթմական շարադրանքում առկա են հայելային դարձվածքներ, որոնք քրդական պարային կերտվածքի երգերի շեշտադրությունը բնորոշող երևույթներ են։

Նույն երգի ռիթմական երկչափ և եռաչափ տարբերակների գոյության հետ հայտնի են նաև երգերի ռիթմական ընթացքի՝ երկչափից եռաչափի վերափոխման կամ տրանսֆորմացիայի օրինակներ։ Նման վերափոխումը վառ կերպով դրսևորվում է հատկապես գործիքային պարեղանակներում, որոնք հիմնականում պարերգերի մեղեդիների գործիքային տարբերակներն են։ Գործիքային պարեղանակներում ռիթմական փոխակերպումը համընկնում է արագության աճի հետ։ «Ռոմանիկ» պարեղանակը[6] ձայնագրվել է զուռնայի նվագից։

---

6 Պարեղանակը անտիպ է։



Երաժշտագիտության մեջ կա ենթադրությունն, որ եռաչափ մետրառիթմը ածանցվել է երկչափից և ավելի ուշ ծնունդ ունի։

Վերը բերված և նման այլ տարբերակները թույլ են տալիս եզրակացնելու, որ քրդական պարային կերտվածքի երգերն ունեն երկակի ռիթմական կատարում, հետևաբար և ռիթմական որոշակի տարբերակում, որը հիմնվում է պարային կերտվածքի երգերում առկա ռիթմաշարահյուսական տարբեր համակարգերի վրա։ Դրանցում կառուցվածքային միավորների՝ վանկերի, դրանց համապատասխան երաժշտական ռիթմական միավորների և բնականաբար նաև շեշտերի անփոփոխ թվի հետ[7] հավասար և անհավասար են վանկերի և ռիթմական միավորների տևողությունները։

Ռիթմական տարբերակման, վերափոխման օրինակներում անցումը ռիթմաշարահյուսական մի համակարգից մյուսը կատարվում է $\frac{2}{4}$ և $\frac{6}{8}$ մետրառիթմերի կառուցվածքային ընդհանրության միջոցով։ $\frac{2}{4}$-և $\frac{6}{8}$ մետրառիթմերն ունեն երկմասանի կառուցվածք, իսկ փոխակերպման ժամանակ նաև մասերի հավասար տևողություն։

Ռիթմաշարահյուսական մի համակարգից անցումը մյուսին, ժողովուրդը իրագործում է հեշտությամբ՝ հիմնվելով իր մեծ փորձի վրա։

Նկատենք, որ քրդական ժողովրդական երաժշտության մեջ ռիթմի շարադրանքի փոխակերպման սաղմերը հանդիպում են դեռևս երգարվեստի վաղ շերտերում. լացերում, էպիկական երգերում։ Նման երևույթ կա Կոմիտասի ձայնագրած «Մամզին» վիպերգում[8]։

---

7 Պարային կերտվածքի երգերի կառուցվածքներում նկատվող տաղաչափության և երաժշտության ռիթմական միավորների թվի հաղվադեպ փոփոխությունը սովորաբար չի տեղում երդի համաչափ ընթացքի վրա։

8 Վիպերգը հրատարակվել է Ս. Հայկունու կազմած «Էմինյան ազգագրական ժողովածուի Ե՝ «Հայ-քրդական վեպ» հատորի հավելվածում, Կոմիտասի ձայնագրած 13 քրդական վիպերգերի թվում (Մոսկվա, 1904)։

Ռիթմական միավորի՝ երկբաժանումից եռաբաժանմանը անցնելը մեղեդուն որոշակի ճկունություն է հաղորդում։

Այսպիսով, պարային կերտվածքի երգերի բանաստեղծությունները, թերևս նաև դրանց հետ առնչվող բանահյուսության այլ նմուշները, հիմքում ունենալով ռիթմաշարահյուսական որոշակի համակարգեր, ենթադրել են տալիս որոշակի ընթերցում, շեշտադրման որոշակի կարգ։ Ռիթմաշարահյուսական այդ համակարգերը, որոնք հետագայում երաժշտական ռիթմերի ուսումնասիրմանը զուգահեռ կարող են լրացվել, համընկնում են վանկաշեշտային տաղաչափության կվալիտատիվ և կվանտիտատիվ համակարգերին[9]։

Երկչափ և եռաչափ ռիթմական շարադրանքների հարաբերությունները (տարբերակում, փոխակերպում) քրդական միջավայրում ունեն խոր արմատներ և ներկայանում են իբրև օրինաչափություններ։

Աղգային երաժշտության մեջ նկատված այս երևույթները, անշուշտ, ունեն նաև միջազգային հատկանիշներ, մանավանդ, որ նման երևույթներ առկա են նաև եվրոպական դասական, հայկական (ըստ լսողական պրակտիկայի), չուվաշական[10], հնարավոր է և այլ ժողովուրդների երաժշտության մեջ։

Քրդական երաժշտության ռիթմի տիպաբանության ուսումնասիրմանը զուգահեռ ժամանակին կարող են բացահայտվել նաև երգերի ռիթմական դրսևորման այլ եղանակներ, փոխակերպման այլ երևույթներ ևս, որոնք կլրացնեն տաղաչափություն-երաժշտական ռիթմ փոխհարաբերությունների տեսությունը։

О РИТМИЧЕСКИХ ВАРЬИРОВАНИЯХ КУРДСКИХ НАРОДНЫХ ПЕСЕН ТАНЦЕВАЛЬНОГО СКЛАДА И ИХ СООТНОШЕНИЯХ

Н. Г. ДЖАУАРИ

Резюме

Курдский поэтический фольклор, в том числе стихи песен танцевального склада и находящиеся в близких отношениях произведения средневековых поэтов, имеют определенную манеру исполнения. Она отличается торжественностью, своеобразным ритмом, который неотделим от музыкального, тем более, что восточные, в том числе и курдские средневековые поэты являлись в основном певцами—исполнителями своих произведений. Ритм песен выражается квантитативными и квалитативными ритмосинтаксическими системами, на которых основывается варьирование песен танцевального склада. Двоякое—двухдольное и трехдольное ритмическое исполнение встречается как между подобными образцами, так и внутри самих песен.

---

9 Համակարգերի այս անվանումները, որոնք բանագիտության մեջ դեռևս քննարկվում են, սովորաբար կիրառվել են բանաստեղծության տաղաչափության բնագավառում։ Թվում է, թե դրանց կիրառումը նաև երաժշտության ռիթմաշարահյուսական համակարգերի բնութագրման համար թույլատրելի է, քանի որ ժողովրդական երաժշտության մեջ գոյություն ունի խոսքի և մեղեդու մեկ ընդհանուր ռիթմ։

10 М. Г. Кондратьев, К вопросу о временной организации чувашских народных песен (Памяти К. Квитки, М., 1983, с. 179—184).